



ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

01.09.2017թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2017/37

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 08.08.2017թ. թիվ 03/27-1/14419-17 գրությամբ Աշոտ Ազիզյան Ազատի Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 24.07.2017թ. թիվ ԴՎԱ/2444 գրության հիման վրա, 08.08.2017թ. թիվ 03/27-1/14419-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնել է Աշոտ Ազիզյան Ազատի Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. Աշոտ Ազիզյան Ազատի Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը 09.08.2017թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/14472-17 գրությամբ դիմել է Աշոտ Ազիզյան Ազատի Ա/Ձ-ին և վերջինիս տեղեկացրել է, որ ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 24.07.2017թ. թիվ ԴՎԱ/2444 գրության հիման վրա, 08.08.2017թ. թիվ 03/27-1/14419-17 գրությամբ հտորհրդում նախաձեռնել է Աշոտ Ազիզյան Ազատի Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ և խնդրել է ներկայացնել գրավոր կարծիք, որին ի պատասխան՝ Աշոտ Ազիզյան Ազատի Ա/Ձ-ն 13.08.2017թ. գրությամբ հայտնել է, որ Աշոտ Ազիզյան Ազատի Ա/Ձ-ի և «Մարիշ Գրուպ» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագիրը համապատասխանում է իրականությանը և Աշոտ Ազիզյան Ազատի Ա/Ձ-ի կողմից իրականացվել է նշված ծառայությունը: Սակայն համակարգչային օպերատորի անփութության պատճառով, տվյալ գործարքի համար դուրս գրված հաշվարկային փաստաթուղթը անհայտ պատճառներով չեղյալ է համարվել և բնականաբար չի արտացոլվել 2017թ. առաջին եռամսյակի հաշվետվության մեջ, ինչը պարզ է դարձել միայն «Արասո» ՍՊԸ-ի կողմից հտորհրդին ներկայացված բողոքից հետո:

Ամփոփելով վերոգրյալը, Աշոտ Ազիզյան Ազատի Ա/Ձ-ն խնդրել է հտորհրդին մեղմ պատիժ սահմանել, քանի որ վերը նշվածը դիտավորության արդյունք չի հանդիսանում:

Աշոտ Ազիզյան Ազատի Ա/Ձ-ն, պատշաճ ծանուցված լինելով հտորհրդի 15.08.2017թ. ժամը 11:00-ի նիստի վերաբերյալ, ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է 13.08.2017թ. գրությամբ հայտնած դիրքորոշումը:

3. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 24.07.2017թ. թիվ ԴՎԱ/2444 գրությամբ ներկայացրել է ՀՀ պաշտպանության

նախարարության կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲԸԾՁԲ-12/4» ծածկագրով ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն վերոհիշյալ գրությամբ հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲԸԾՁԲ-12/4» ծածկագրով բաց ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել թվով երկու մասնակիցներ, այդ թվում՝ Աշոտ Ազիզյան Ազատի Ա/Ձ-ն: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից վերջինս Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից և որին 31.05.2017թ. «armeps» համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով առաջարկվել է ներկայացնել հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը: Ուսումնասիրելով Աշոտ Ազիզյան Ազատի Ա/Ձ-ի կողմից որպես «Մասնագիտական փորձառություն» չափանիշը հավաստելու համար ներկայացված՝ «Մարիշ Գրուպ» ՍՊԸ-ի հետ 23.01.2017թ. կնքված Մ-Գ 01/17 պայմանագիրը, գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2017թ. N 168-Ն որոշման 71-րդ կետը, որոշել է դիմել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե՝ նշված պայմանագրի իսկությունը ստուգելու նպատակով:

Քննարկելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացված 13.07.2017թ. թիվ 1/6-1/25180-17 գրությունը՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է Աշոտ Ազիզյան Ազատի Ա/Ձ-ի կողմից որպես մասնագիտական փորձառության աուկայությունը հավաստելու նպատակով ներկայացված «Մարիշ Գրուպ» ՍՊԸ-ի հետ 23.01.2017թ. կնքված Մ-Գ 01/17 պայմանագիրը գնահատել իրականությանը չհամապատասխանող:

Հիմք ընդունելով Կարգի 71-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերը՝ գնահատող հանձնաժողովը որոշել է Աշոտ Ազիզյան Ազատի Ա/Ձ-ի հայտը մերժել և վերջինիս տվյալները ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 15.08.2017թ. ժամը 11:00-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են 24.07.2017թ. թիվ ԴՎԱ/2444 գրությամբ ներկայացրած դիրքորոշումը:

4. ՍՑ-ԱՄ-2017/37 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2017/37 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲԸԾՁԲ-12/4» ծածկագրով բաց ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով Աշոտ Ազիզյան Ազատի Ա/Ձ-ն հայտ է ներկայացրել:

2. Աշոտ Ազիզյան Ազատի Ա/Ձ-ն հայտի N 3.1 հավելվածով՝ մասնագիտական փորձառության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ **բաց ընթացակարգի հայտը ներկայացնելու փարվա և դրան նախորդող երեք փարիների ընթացքում պարշաճ ձևով իրականացրել է միջոցառումների կազմակերպման ծառայություններ, որի ընդհանուր արժեքը կազմել է 3 024 000 ՀՀ դրամ և պարտավորվում է նշված ծածկագրով բաց ընթացակարգի հրավերով սահմանված կարգով ներկայացնել սույն հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:**

Ընդ որում դրա (դրանց) շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

3. Աշոտ Ազիզյան Ազատի Ա/Ձ-ն հայտի թիվ 4 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով, **որի ընդհանուր արժեքը կազմել է 5 310 000 ՀՀ դրամ:**

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.05.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 4.1 կետով կայացված որոշմամբ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով Աշոտ Ազիզյան Ազատի Ա/Ձ-ն ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

5. Աշոտ Ազիզյան Ազատի Ա/Ձ-ի կողմից որպես մասնագիտական փորձառությունը հիմնավորող փաստաթուղթ ներկայացվել է Աշոտ Ազիզյան Ազատի Ա/Ձ-ի և «Մարիշ գրուպ» ՍՊԸ-ի միջև 23.01.2017թ. կնքված թիվ Մ-Գ 01/17 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), **որի ընդհանուր արժեքը կազմել է 3 024 000 ՀՀ դրամ:**

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.06.2017թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.2 կետով կայացված որոշմամբ Աշոտ Ազիզյան Ազատի Ա/Ձ-ն ճանաչվել է ընտրված մասնակից:

7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.06.2017թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 5 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ հրավիրվել է գնահատող հանձնաժողովի նիստ, որտեղ քննարկվել է «Արասո» ՍՊԸ-ի 21.06.2017թ. գրությունը և հիմք ընդունելով դրա վերաբերյալ Պատվիրատուի ղեկավարի հանձնարարականը՝ հանձնաժողովը որոշել է հրավիրել նոր նիստ՝ ապահովելով «Արասո» ՍՊԸ-ի ներկայացուցչի ներկայությունը՝ հարցի մանրամասները քննարկելու և մասնակցի մոտ կասկած հարուցող հանգամանքները պարզելու նպատակով:

8. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.06.2017թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 6 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ քննարկելով «Արասո» ՍՊԸ-ի կողմից 27.06.2017թ. ներկայացված նոր գրությունը, լսելով «Արասո» ՍՊԸ-ի մեկնաբանությունները և հաշվի առնելով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 19.06.2017թ. և 26.06.2017թ. կայացած նիստերի ընթացքում արված առաջարկները հարցում կատարելու վերաբերյալ՝ հանձնաժողովը առաջնորդվելով ՀՀ կառավարության 10.02.2017թ. թիվ 168-Ն որոշման 71-րդ կետով, որոշեց դիմել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե՝ Աշոտ Ազիզյան Ազատի Ա/Ձ-ի կողմից որպես հրավերով

նախատեսված մասնագիտական փորձառություն չափանիշի առկայությունը հավաստելու համար ներկայացված նմանատիպ պայմանագրի իսկությունը ստուգելու նպատակով:

9. Պատվիրատուի 30.06.2017թ. հարցմանն ի պատասխան՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 13.07.2017թ. թիվ 1/6-1/25180-17 գրությամբ հայտնել է, որ ըստ ՀՀ ԿԱ ՊԵԿ տեղեկատվական բազայի տվյալների Աշոտ Ազիզյան Ազատի Ա/Ձ-ի կողմից 23.02.2017թ. դուրս է գրվել թիվ Ա2289565241 համարով հարկային հաշիվը «Մարիշ գրուպ» ՍՊԸ-ի անվամբ գումարով՝ 3 024 000 ՀՀ դրամ՝ ՌԴ բանակի օրվան նվիրված միջոցառման ծառայության մատուցման համար, սակայն նշված հարկային հաշիվը նույն օրը չեղյալ է համարվել: Միաժամանակ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն տեղեկացրել է, որ 2017թ. 1-ին եռամսյակի համար հարկային մարմին ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկով Աշոտ Ազիզյան Ազատի Ա/Ձ-ն հայտարարագրել է 1 752 444 ՀՀ դրամ իրացման շրջանառություն (այդ թվում ԱԱՀ 292 074 ՀՀ դրամ), որը վերաբերում է Աշոտ Ազիզյան Ազատի Ա/Ձ-ի կողմից երկու այլ հարկային հաշիվներով կատարված գործարքներին:

Ամփոփելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն հայտնել է, որ կարելի է եզրակացնել, որ վերը նշված գործարքը ՌԴ բանակի օրվան նվիրված միջոցառման ծառայության մասով Աշոտ Ազիզյան Ազատի Ա/Ձ-ի կողմից ներկայացված հաշվարկներով արտացոլված չէ և ըստ այդմ համապատասխան հարկային պարտավորությունը կատարված չէ:

10. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.07.2017թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 8 արձանագրության 1.1 կետով կայացված որոշմամբ արձանագրվել է, որ քննարկելով և հիմք ընդունելով Աշոտ Ազիզյան Ազատի Ա/Ձ-ի կողմից ներկայացված տվյալների իսկությունը ստուգելու նպատակով 30.06.2017թ. թիվ ԴՎԱ/2053 գրությամբ պահանջված հարցման վերաբերյալ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացված 13.07.2017թ. թիվ 1/6-1/25180-17 գրությունը՝ հանձնաժողովը որոշեց Աշոտ Ազիզյան Ազատի Ա/Ձ-ի կողմից որպես հրավերով նախատեսված մասնագիտական փորձառություն չափանիշի առկայությունը հավաստելու համար ներկայացված «Մարիշ գրուպ» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագիրը գնահատել իրականությանը չհամապատասխանող և Աշոտ Ազիզյան Ազատի Ա/Ձ-ի հայտը մերժել:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 08.08.2017թ. թիվ 03/27-1/14419-17 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 24.07.2017թ. թիվ ԴՎԱ/2444 գրությունը՝ կից փաստաթղթերով, Աշոտ Ազիզյան Ազատի Ա/Ձ-ի 13.08.2017թ. գրությունը, Աշոտ Ազիզյան Ազատի Ա/Ձ-ի և «Մարիշ գրուպ» ՍՊԸ-ի միջև 23.01.2017թ. կնքված թիվ Մ-Գ 01/17 պայմանագիրը՝ կից նյութերով, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 13.07.2017թ. թիվ 1/6-1/25180-17 գրությունը, հայտնում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածը սահմանում է, որ՝

1. Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

2. Պարտավորությունները ծագում են պայմանագրից, վնաս պատճառելու հետևանքով և սույն օրենսգրքում նշված այլ հիմքերից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ **պարտավորությունները պեղք է կադարվեն պարզաճ՝** պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան, իսկ նման պայմանների ու պահանջների բացակայության դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներին կամ սովորաբար ներկայացվող այլ պահանջներին համապատասխան:

Նույն օրենսգրքի 424-րդ հոդվածի 1-ին մասի և 2-րդ մասի 1-ին պարբերության համաձայն՝ **պարզաճ կադարումը դադարեցնում է պարտավորությունը:** Պարտատերը, ընդունելով կատարումը, պարտավոր է պարտապանի պահանջով նրան ստացական տալ՝ կատարումը լրիվ կամ համապատասխան մասով ստանալու մասին:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների

ցուցակում, եթե հայրը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: **Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝ մասնագիտական փորձառություն:**

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: **Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:**

Նույն հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի և 6-րդ մասի համաձայն՝

5. Առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում՝

1) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

6. Հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 65-րդ կետի 1-ին, 3-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն՝ մասնակիցների, օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը)

գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

3) *առաջին փեղը զբաղեցրած մասնակիցը՝ որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի պարզաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը.*

4) *մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:*

Այսպես ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲԸԾՁԲ-12/4» ծածկագրով բաց ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով, հայտ է ներկայացրել Աշոտ Ազիզյան Ազատի Ա/Ձ-ն:

Աշոտ Ազիզյան Ազատի Ա/Ձ-ն հայտի N 3.1 հավելվածով՝ մասնագիտական փորձառության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ **բաց ընթացակարգի հայտը ներկայացնելու փարվա և դրան նախորդող երեք փարիների ընթացքում պարզաճ ձևով իրականացրել է միջոցառումների կազմակերպման ծառայություններ, որի ընդհանուր արժեքը կազմել է 3 024 000 ՀՀ դրամ և պարտավորվում է նշված ծածկագրով բաց ընթացակարգի հրավերով սահմանված**

կարգով ներկայացնել սույն հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդ որում դրա (դրանց) շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.05.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 4.1 կետով կայացված որոշմամբ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով Աշոտ Ազիզյան Ազատի Ա/Ձ-ն ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

Աշոտ Ազիզյան Ազատի Ա/Ձ-ի կողմից որպես մասնագիտական փորձառությունը հիմնավորող փաստաթուղթ ներկայացվել է Աշոտ Ազիզյան Ազատի Ա/Ձ-ի և «Մարիշ գրուպ» ՍՊԸ-ի միջև 23.01.2017թ. կնքված թիվ Մ-Գ 01/17 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), որի ընդհանուր արժեքը կազմել է 3 024 000 ՀՀ դրամ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.06.2017թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.2 կետով կայացված որոշմամբ Աշոտ Ազիզյան Ազատի Ա/Ձ-ն ճանաչվել է ընտրված մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.06.2017թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 5 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ հրավիրվել է գնահատող հանձնաժողովի նիստ, որտեղ քննարկվել է «Արասո» ՍՊԸ-ի 21.06.2017թ. գրությունը և հիմք ընդունելով դրա վերաբերյալ Պատվիրատուի ղեկավարի հանձնարարականը՝ հանձնաժողովը որոշել է հրավիրել նոր նիստ՝ ապահովելով «Արասո» ՍՊԸ-ի ներկայացուցչի ներկայությունը՝ հարցի մանրամասները քննարկելու և մասնակցի մոտ կասկած հարուցող հանգամանքները պարզելու նպատակով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.06.2017թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 6 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը՝ քննարկելով «Արասո» ՍՊԸ-ի կողմից 27.06.2017թ. ներկայացված նոր գրությունը, լսելով «Արասո»

ՍՊԸ-ի մեկնաբանությունները, հաշվի առնելով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 19.06.2017թ. և 26.06.2017թ. կայացած նիստերի ընթացքում արված առաջարկները՝ հարցում կատարելու վերաբերյալ, և առաջնորդվելով ՀՀ կառավարության 10.02.2017թ. թիվ 168-Ն որոշման 71-րդ կետով, որոշեց դիմել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե՝ Աշոտ Ազիզյան Ազատի Ա/Ձ-ի կողմից որպես հրավերով նախատեսված մասնագիտական փորձառություն չափանիշի առկայությունը հավաստելու համար ներկայացված նմանատիպ պայմանագրի իսկությունը ստուգելու նպատակով:

Պատվիրատուի 30.06.2017թ. հարցմանն ի պատասխան՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 13.07.2017թ. թիվ 1/6-1/25180-17 գրությամբ հայտնել է, որ ըստ ՀՀ ԿԱ ՊԵԿ տեղեկատվական բազայի տվյալների Աշոտ Ազիզյան Ազատի Ա/Ձ-ի կողմից ՌԴ բանակի օրվան նվիրված միջոցառման ծառայության մատուցման համար 23.02.2017թ. դուրս է գրվել թիվ Ա2289565241 համարով հարկային հաշիվը «Մարիշ գրուպ» ՍՊԸ-ի անվամբ գումարով՝ 3 024 000 ՀՀ դրամ, սակայն նշված հարկային հաշիվը նույն օրը չեղյալ է համարվել: Միաժամանակ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն տեղեկացրել է, որ 2017թ. 1-ին եռամսյակի համար հարկային մարմին ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկով Աշոտ Ազիզյան Ազատի Ա/Ձ-ն հայտարարագրել է 1 752 444 ՀՀ դրամ իրացման շրջանառություն (այդ թվում՝ ԱԱՀ 292 074 ՀՀ դրամ), որը վերաբերում է Աշոտ Ազիզյան Ազատի Ա/Ձ-ի կողմից երկու այլ հարկային հաշիվներով կատարված գործարքներին:

Ամփոփելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն հայտնել է, որ կարելի է եզրակացնել, որ վերը նշված գործարքը ՌԴ բանակի օրվան նվիրված միջոցառման ծառայության մասով Աշոտ Ազիզյան Ազատի Ա/Ձ-ի կողմից ներկայացված հաշվարկներով արտացոլված չէ և ըստ այդմ համապատասխան հարկային պարտավորությունը կատարված չէ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.07.2017թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 8 արձանագրության 1.1 կետով կայացված որոշմամբ արձանագրվել է, որ հիմք ընդունելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացված 13.07.2017թ. թիվ 1/6-1/25180-17 գրությունը՝ հանձնաժողովը որոշեց Աշոտ Ազիզյան Ազատի Ա/Ձ-ի կողմից որպես հրավերով նախատեսված մասնագիտական փորձառություն չափանիշի

առկայությունը հավաստելու համար ներկայացված «Մարիշ գրուպ» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագիրը գնահատել իրականությանը չհամապատասխանող և Աշոտ Ազիզյան Ազատի Ա/Ձ-ի հայտը մերժել:

Աշոտ Ազիզյան Ազատի Ա/Ձ-ն 13.08.2017թ. գրությամբ Խորհրդին հայտնել է, որ Աշոտ Ազիզյան Ազատի Ա/Ձ-ի և «Մարիշ Գրուպ» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագիրը համապատասխանում է իրականությանը և Աշոտ Ազիզյան Ազատի Ա/Ձ-ի կողմից իրականացվել է նշված ծառայությունը, սակայն համակարգչային օպերատորի անփութության պատճառով, տվյալ գործարքի համար դուրս գրված հաշվարկային փաստաթուղթը անհայտ պատճառներով չեղյալ է համարվել և չի արտացոլվել 2017թ. առաջին եռամսյակի հաշվետվության մեջ, ինչը պարզ է դարձել միայն «Արասո» ՍՊԸ-ի կողմից Խորհրդին ներկայացված բողոքից հետո:

Աշոտ Ազիզյան Ազատի Ա/Ձ-ն խնդրել է Խորհրդին մեղմ պատիժ սահմանել, քանի որ վերը նշվածը դիտավորության արդյունք չի հանդիսանում:

Ամփոփելով վերը նշված փաստերը, Խորհուրդն արձանագրում է, որ Աշոտ Ազիզյան Ազատի Ա/Ձ-ի կողմից հայտի թիվ 3.1 հավելվածով ներկայացված հայտարարությունը հանդիսանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված կեղծ տվյալի ներկայացում:

Այսպիսով, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե **հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:**

Միևնույն ժամանակ, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար **պարտադիր և միաժամանակյա առկա հիմքերն են՝**

• նույն կերպի «բ» ենթակետերով նախատեսված և մասնակցին վերագրվող խախտման առկայությունը,

• խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից մրցակցային գործընթացին մասնակցելու համար հայտ ներկայացրած լինելու հանգամանքը:

Հետևաբար, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում Աշոտ Ազիզյան Ազատի Ա/Ձ-ին ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված և **վերջինիս վերագրվող խախտում թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում Աշոտ Ազիզյան Ազատի Ա/Ձ-ն մասնակցած լինի գնման որևէ գործընթացին և ներկայացրած լինի հայտ**, քանի որ օրենքի նշված նորմի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ Աշոտ Ազիզյան Ազատի Ա/Ձ-ի վերաբերյալ դեռևս առկա է Ցուցակում ներառելու միայն մեկ հիմքը, այն է՝ **Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված և վերջինիս վերագրվող խախտման առկայությունը**, քանի որ սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ չկա որևէ տեղեկատվություն Աշոտ Ազիզյան Ազատի Ա/Ձ-ի կողմից խախտումը թույլ տալու օրվանից՝ 21.05.2017թ.-ից հաշված մեկ տարվա ընթացքում հայտ ներկայացնելու վերաբերյալ:

Աշոտ Ազիզյան Ազատի Ա/Ձ-ին Ցուցակում ներառելու մասին որոշումը կարող է կայացվել միայն երկրորդ պարտադիր հիմքի՝ **խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից հայտ ներկայացնելու հանգամանքի** ի հայտ գալու պայմաններում:

Հաշվի առնելով վերոգրյալը, Խորհուրդը գտնում է, որ ՀՀ ֆինանսների նախարարության 08.08.2017թ. թիվ 03/27-1/14419-17 գրությամբ ներկայացված Աշոտ Ազիզյան Ազատի Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 08.08.2017թ. թիվ 03/27-1/14419-17 գրությունով Աշոտ Ազիզյան Ազատի Ա/Ձ-ին (ՀՎՀՀ՝ 27837851) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝



ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ